

## Սիրելի հայրենակիցներ,

Սէկ տարի անցած է արդէն այն ցաւալի իրադարձութիւններէն, երբ Կիպրոսի նորընտիր կառավարութիւնը ընդունեց Եւրոգօտիի պարտադրած վարկային խիստ համաձայնագիրը, փրկելու մեր փոքր կղզին վերջնական սնանկացումէ:

Վերջին տարուան ընթացքին, յուշագիրի գործադրութիւնը, պետական եւ անձնական բնագաւառներէն ներս տեղի ունեցած մարդուժի եւ վարձատրութեան կրճատումները, ինչպէս նաեւ կարգ մը կիսակառավարական հաստատութիւններու ապապետականացման ծրագիրները, Կիպրոսի տնտեսական իրավիճակը հասցուցին տխուր հանգրուանի մը, իսկ անգործութեան համեմատութիւնը՝ մօտ 20%-ի: Թէեւ ժողովուրդը տեղեակ պահուած էր դիմագրաւուելիք դժուարութիւններուն մասին եւ տնտեսագէտներ ու քաղաքական դէմքեր յաճախ կը յուշէին, թէ բաւական ծանր տարի մը կը սպասէ մեզի, սակայն գործնական գետնի վրայ կ'ապրինք չափազանց նեղ օրեր:

Քաղաքական բեմին վրայ, 11 Փետրուար 2014-ին, ՄԱԿ-ի հովանաւորութեան տակ ընթացող բանակցութիւններուն որպէս արդիւնք, հրապարակուեցաւ երկու համայնքներու ղեկավարներուն միջեւ համաձայնուած Միացեալ Յայտարարութիւնը, վերսկսելու Կիպրոսի հարցով արդիւնաւէտ գործընթացը: Ամենակարեւոր կէտը որ կ'արժէ ընդգծել Միացեալ Յայտարարութենէն կը հաստատէ, թէ «Բանակցութիւնները հիմնուած են այն սկզբունքին վրայ, որ ո՛չ մէկ բան համաձայնուած չէ, մինչեւ ամէն ինչ համաձայնուի»:

Այս նոր եղելությունն լոյսին տակ, ծայր առին յոյն կիպրացի եւ թուրք կիպրացի բանագնացներուն հերթական հանդիպումները եւ յոյսով ենք, որ մօտ ապագային, անոնք պիտի յանգին կղզին վերամիացնելու արդար լուծումի մը, երկ-շրջանային եւ երկ-համայնքային դաշնակցութեան մը հիման վրայ, ընդունելի երկու համայնքներուն կողմէ, մէկ գերիշխանութեամբ եւ մէկ հպատակութեամբ: Իմ կարգիս, որպէս Պետական Ներկայացուցիչ, անմիջապէս հանդիպեցայ յոյն կիպրացի բանագնաց (negotiator) Պրն. Անդրէաս Մավրոեաննիսի հետ, քննարկելու կիպրահայ համայնքին ապագայ կարգավիճակին հետ առնչուող հարցերը:

Կիպրոսը, սիրելիներ, կը գտնուի տնտեսական եւ քաղաքական բարդ ժամանակահատուածի մը դիմաց: Կառավարութեան տարած գերմարդկային ճիգերը դուրս գալու այս հանգուցալի կացութիւններէն, մեր բոլորէն կը պահանջէ մեծ զոհողութիւն եւ լայն համբերութիւն, աստիճանաբար կերտելու համար ամուր հիմքերով երկիր մը, ուր խաղաղօրէն բարօր կեանք պիտի ապրին մեր զաւակներն ու թոռները:

Այս բոլորին վրայ վերջերս եկաւ անելնալու Սուրիոյ Քեսապ բնակավայրի մեր հարազատներուն տեղահանութիւնը, ընդվզումի լայն ալիք մը ստեղծելով համայն հայութեան մօտ: Որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ, Բողոքագիրներ ուղարկելով Կիպրոսի եւ Միջազգային կառոյցներու անձնաւորութիւններուն, անոնցմէ խնդրեցի անմիջապէս միջնորդել եւ ապահովել Քեսապահայութեան անվտանգ վերադարձը: Այս մասին անջատ բաժինով անդրադարձած ենք «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Հակառակ այս բոլորին, Երեսփոխանական Գրասենեակի աշխատանքները կը շարունակուին բնականոն ձեւով, շրջանցելով մեր դիմաց ցցուած զանազան արգելքները եւ ըստ օրուայ կարիքներուն կը փորձենք լուծում տալ անոնց:

Առաջին հերթին կը փափաքին սրտի անհուն գոհունակութեամբ փոխանցել, թէ վերջին տարուան ընթացքին ճկուն քաղաքականութեան իբրեւ արդիւնք, կարողացանք փրկել Վիքթորիա փողոցին վրայ գտնուող եւ վերջերս USAID-ի ծախսերով վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ համալիրին գործածութիւնը մեր ձեռքերէն դուրս մնալու հաւանականութիւնը: Շնորհիւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Կիպրոսի մօտ դեսպան Ն.Վ. Շոն Բէտնիկի միջնորդութեան ու յարատեւ ջանքերուն, կարելի եղաւ ապահովել նախ եկեղեցւոյ հանգամանքը որպէս սըրբավայր եւ ապա Ազգային Իշխանութեան մասնակցութիւնը՝ համալիրի գործածութեան հետ կապուած որոշումներուն մէջ: Առաւել եւս, 50 տարի ետք, կը նախատեսուի առաջին եկեղեցական արարողութեան իրականացումը, որ տեղի պիտի ունենայ 11 Մայիս 2014-ին, կէսօրուան ժամը 12:00-ին: Հոս, պարտք կը զգամ շնորհակալութիւններս յայտնել Ազգային Առաջնորդարանի բռնագրաւեալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ համալիրի աշխատանքներով նշանակուած յատուկ յանձնախումբին, որուն անդամները հետոս միասնաբար գործակցելով, աջալուրջ հսկեցին վերանորոգութեան եւ կազմակերպական աշխատանքներուն, ապահովելով անոնց հեզասահ ընթացքը:

Ապրիլ 5-6, կը մեկնին Պրիւքսէլ, մասնակցելու ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի միջոցառումները համակարգող Եւրոպայի տարածքին մէջ գործող յանձնախումբերու ղեկավարներու հաւաք-հանդիպումին: Եթէ կարիքը զգացուի, այս մասին յաւելեալ տեղեկատուութիւն պիտի տանք «Լրատու»ի յաջորդ թիւով:

Նաեւ պարտք կը զգամ փոխանցելու, թէ քաջալերուած անցեալ տարուայ Մայիսին տեղի ունեցած Երեսփոխանական Գրասենեակի «ՆԱՆՕՐ» մանկապատանեկան պարախումբի յաջող ելոյթէն, մասնակցութեամբ աւելի քան 50

փորձրիկներու, որ իրականացաւ «ՍԻՓԱՆ» պարախումբի տարեկան ելոյթին ընթացքին, այս տարի եւս համագործակցութեամբ Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղին, Շաբաթ, 10 Մայիս 2014-ին, Ստրովոլոսի քաղաքապետարանի սրահին մէջ դարձեալ ելոյթ պիտի ունենան անոնք: Շաբաթական փորձերը կանոնաւոր դրութեամբ կը շարունակուին, հայկական տարագներու պատրաստութիւնը ընթացքի մէջ է եւ ելոյթի տոմսերը արդէն իսկ կը վաճառուին մեր գրասենեակէն: Ուստի, բոլորէդ կը սպասենք, ձեր ներկայութեամբ սատար հանդիսանաք այս հսկայական ու հայանպաստ աշխատանքին:

Ինչպէս ամէն տարի եւ համագործակցութեամբ Ազգային Առաջնորդարանին, այս տարի եւս պիտի այցելենք Ս. Մակարայ վանք Կիրակի, 18 Մայիս 2014-ին: Նոյն օրը, ծրագրած ենք նաեւ այցելել Կանչուորի Ս. Աստուածածին եկեղեցին (Ֆամակուսթա), եթէ արգելքներ չյայտնուին: Ներփակ կը գտնէք այս ուխտագնացութեան գծով յայտարարութիւնը:

Յիշեցնենմ, թէ «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնի նոր տարեշրջանի արձանագրութիւնները պիտի սկսին 1 Մայիսին: Հետաքրքրուող ծնողներէն կը խնդրուի կապ հաստատել ներփակուած յայտարարութեան մէջ յիշուած հեռաձայնի միջոցով:

Սիրելիներ,

Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Զատիկին առիթով ընդունեցէք իմ սրտագին բարեմաղթութիւնները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Հպատակություն

Փետրուար ամսուայ մէջ, երկար տարիներ Նիկոսիա օրինաւոր բնակութիւն հաստատած հայրենակից մը, ստացաւ Կիպրական հպատակութիւն:

### Կիպրահայ գաղութի կեանքէն



Կիրակի, 12 Յունուար 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Մելգոնեան անմահ բարերարներու յիշատակին մատուցուած Հոգեհանգստեան պաշտօնին: Ապա, Պետական Ներկայացուցիչը, ազգայիններու ընկերակցութեամբ, այցելեց Մելգոնեան բարերարներու դամբանը իր յարգանքի տուրքը մատուցելու:

Չորեքշաբթի, 19 Փետրուար 2014-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուելով Թեմական ժողովի նիստին, զեկուցեց Վիքթորիա փողոցին վրայ գտնուող Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ հայկական համալիրին առնչութեամբ, վերջին շրջանին տեղի ունեցող բանակցութիւններուն դրական զարգացումներուն մասին: Ան ի մասնաւորի շեշտեց, թէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Դեսպան Ն.Վ. ճոն Քեօնիկին ուղղուած նամակով մը, Կիպրոսի EVKAF-ը գրաւոր հաստատած է Ս. Աստուածածին եկեղեցւոյ ու համալիրին պատմական սրբատեղի մը ըլլալու եւ ըստ այնմ գործածութեան կարելորութիւնը, ինչպէս նաեւ 15 Մայիս 1571-ին Սուլթան Սելիմ Բ.-ի հրովարտակով (Ֆիրման), զայն հայերուն փոխանցուած ըլլալու իրականութիւնը: Կիպրոսի EVKAF-ը նաեւ պատրաստակամութիւն յայտնած է ընդառաջելու Կիպրոսի Ազգային Առաջնորդարանի փափաքին, եկեղեցական արարողութիւն իրականացնելու: Պրն. Վարդգէս Մահտեսեան եզրակացուց ըսելով, որ մօտիկ ապագային պիտի ստեղծուի յանձնախումբ մը, որ պիտի տնօրինէ եւ վերահսկէ գործածութեան եղանակը, որուն մէջ Ազգային Իշխանութիւնը քանի մը անդամներ պիտի ունենայ, իսկ Միացեալ Նահանգներու դեսպանութիւնը՝



իր ներկայացուցիչը: Կը նախատեսուի Կիրակի, 11 Մայիս 2014-ին, 50 տարիներ ետք, առաջին անգամ ըլլալով եկեղեցական արարողութիւն իրականացնել բռնագրաւեալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Հետեւաբար, մեր գաղութի անդամներէն կը սպասենք խումներամ բազմութեամբ ներկայ գտնուիլ այս պատմական եկեղեցական արարողութեան:

Կիրակի, 30 Մարտ 2014-ին, յատկապէս հրաւիրուելով, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած աւանդական Միջինքի ճաշին, որ տեղի ունեցաւ ՀՍԸՄ-ՀԵՄ-ի ակումբի սրահին մէջ:

### **Քեսապահայութեան տարագրութիւն**

Ուրբաթ, 21 Մարտ 2014-ի առաւօտեան կանուխ ժամերուն, հայկական Քեսապ բնակավայրին վրայ տեղի ունեցած յարձակումներուն պատճառով, որու մէջ թրքական գործօնը մեծ դերակատարութիւն ունեցած է, Քեսապահայութիւնը լքելով տուն ու տեղ, տարագիր ելած ու ապաստանած է Լաթաքիա, ի մասնաւորի քաղաքին հայկական եկեղեցւոյ բակը: Այս ցաւալի եղելութիւնը, ընդվզումի մեծ ալիք յառաջացուց հայկական բոլոր գաղութներուն մէջ:

Խիստ դատապարտելով կատարուածը եւ շեշտելով Թուրքիոյ մեղսակցութիւնը այս հարցին մէջ, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, անմիջապէս բողոքի գիրեր յղեց Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր քարտուղար Պրն. Պան Քի-մունին, Եւրոպական Խորհրդարանի եւ Եւրոպական Յանձնաժողովի Նախագահներ՝ Պրն. Մարթին Շուլցի եւ ժողէ Մանուէլ Պարրոզոյի յաջորդաբար, Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Պրն. Եաննակիս Օմիրուին, Արտաքին Գործոց Նախարար Պրն. Եոաննիս Կասուլիտի-

սին, ինչպես նաև Կիպրոսի Եւրոխորհրդարանի 6 անդամներուն, պահանջելով ՄԱԿ-էն եւ Եւրոխորհուրդէն անյապաղօրէն միջամտել, դադրեցնելու գործուած անարդարութիւնը եւ ապահովելու պատմական հայկական քաղաքին՝ Քեսապին ու անոր ժողովուրդին անվտանգութիւնը: Ան նաև ընդգծեց, թէ անմեղ քաղաքացիներու դէմ գրգռութիւնները կը խախտեն միջազգային օրէնքը եւ մարդկային իրաւունքներու սկզբունքը:

Յոյսով ենք, որ շուտով Քեսապի մէջ խաղաղութիւնը կը վերահաստատուի եւ մեր հայրենակիցները կը վերադառնան իրենց տուները:

### **Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ծեռնարկներ**

Չորեքշաբթի, 22 Յունուար 2014-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ «Լիտրա Փալաս» պանդոկին մէջ, Սլովաքիոյ դեսպան Տիկին Օքսանա Թոմովայի կազմակերպած միջ-համայնքային հանդիպում ընդունելութեան, ներկայութեամբ յոյն կիպրացի եւ թուրք կիպրացի քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներուն:

Հինգշաբթի, 23 Յունուար 2014-ին, Պրն. Վարդգէս Սահտեսեան իր Խորհրդարանական Գրասենեակին մէջ, ծանօթացման հանդիպում



մը ունեցաւ յոյն մտաւորական, տնտեսագէտ, հետազօտող եւ դասախօս Պրն. Նիկոս Լիդերոսի հետ: Նշենք, թէ Պրն. Լիդերոս շատ մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ ընդհանրապէս հայ ժողովուրդի պատմութեան եւ ի մասնաւորի Հայոց Ցեղասպանութեան եւ Հայ Դատի աշխատանքներուն նկատմամբ:

Ուրբաթ, 24 Յունուար 2014-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Կիպրոսի Հայ Քաղաքական Կուսակցութիւններու, Հայ Դատի եւ Ազգային Իշխանութեան ներկայացուցիչներուն, հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի մէջ Ձուիցերիոյ Դեսպան Տիկին Կապրիէլա Նուցի Սուլփիցիոյի հետ, անոր յանձնելով Տողու Փերինչեքի հարցով նամակ մը: Պատուիրակութիւնը իր վստահութիւնը յայտնեց, որ Ձուիցերիոյ Կառավարութիւնը անկասկած պիտի բողոքարկէ Եւրոպական Դատարանի Մարդկային Իրաւանց վճիռին դէմ:

Շաբաթ, 25 Յունուար 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Հրէական Ողջակիզման (Holocaust) ի յիշատակ կազմակերպուած միջոցառումին, որ տեղի ունեցաւ հին Նիկոսիոյ Royal Hall սրահին մէջ:

Չորեքշաբթի, 29 Յունուար 2014-ին, Պետական Ներկայացուցիչը դարձեալ տեսակցեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն Պրն. Կոստանդինոս Նիքոլայիտիսին հետ, քննարկելու կարգ մը հայրենակիցներու կեցութեան եւ աշխատանքի բարդ հարցերը: Յիշենք, թէ այս մէկը Պրն. Մահտեսեանի երկրորդ հանդիպումն էր Ընդհանուր Տնօրէնին հետ, վերջին երեք ամսուան ընթացքին:

Չորեքշաբթի, 12 Փետրուար 2014-ին, Պրն. Վարդէս Մահտեսեան խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ Հաղորդակցութեանց եւ Գործերու Նախարար Պրն. Տասոս



Միթցուպուլոսի հետ, քննարկելու Հայկական Ցեղասպանության 100-ամեակին առթիւ կիպրական յատուկ դրոշմաթուղթ թողարկելու կարելիութիւնները: Սակայն, անողորմ ճակատագիրը, Շաբաթ, 22 Մարտ 2014-ին, մեզմէ յաւերժ խլեց մարդկային իւրայատուկ արժէքներով օժտուած, աշխատասէր եւ աչքառու այս քաղաքական անձնաւորութիւնը, որ իր կարճատեւ կեանքի ընթացքին, համեստ կեցուածքով եւ հաւասարակշռուած քաղաքական մօտեցումներով, կարողացաւ շահիլ համայն Կիպրոսի եւ Յունաստանի ժողովուրդներուն համակրանքը: Երկուշաբթի, 24 Մարտ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը, Կիպրոսի Պաշտպանութեան Նախարարութեան մէջ բացուած ցաւակցական տոմարը ստորագրելով, զայն նկարագրեց որպէս բարոյագիտական բարձր արժէքներով օժտուած անզուգական քաղաքական դէմք: Նոյն օրը կէսօրին, ան մասնակցեցաւ Պրն. Տասու Միթցուպուլոսի թաղման արարողութեան, որ տեղի ունեցաւ Լառնաքայի մէջ:

Երկուշաբթի, 24 Փետրուար 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Հայ Դատի աշխատանքներուն միշտ նեցուկ կանգնող, Կիպրոսի Եւրոներեսփոխան Տիկին Էլէնի Թօխարուսի ամուսնոյն՝ Պրն. Լուիս Քարիօլուի թաղման արարողութեան:

Չորեքշաբթի, 26 Փետրուար 2014-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Աթէնքի Պոլսեցիներու սրահին մէջ տեղի ունեցած «Հայաստան-Արցախ» մէկ ազգ, մէկ պայքար» նիւթով ժողովրդային հաւաքին, որ կազմակերպուած էր Յունաստանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան հովանաւորութեամբ եւ Յոյն-Հայ Բարեկամութեան Կազմակերպութեան: Օրւան պատգամաբերն էր Հայ ժողովուրդի ու Հայ Դատի պաշտպան Պրն. Նիկոս Լիդերոս:

Հինգշաբթի, 27 Փետրուար 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան իր խորհրդարանական գրասենեակին մէջ, հարցազրոյց մը ունեցաւ Գերմանիոյ «Սալէմ» համալսարանի հետազօտութեամբ զբաղող խումբ մը ուսանողներու հետ, վերջիններուս խնդրանքով, «Կիպրոսի բաժանումին ազդեցութիւնը եւ հաւանական վերամիացման գործընթացին ընկալումը ժողովուրդին կողմէ» նիւթով:

Ուրբաթ, 7 Մարտ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Կրթական Նախարարութեան կողմէ հայկական հարցերով պատասխանատու Դոկտ. Լուիս Կիպրիանուի հետ, քննարկելու այս ոլորտէն ներս Կիպրահայութիւնը յուզող հարցեր: Հանդիպումին ներկայ էր նաեւ Կիպրոսի Հանրապետութեան Կրօնական Հարցերով Յանձնակատար Տիկին Քէթի Քլիրիտուն:

Երկուշաբթի, 10 Մարտ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը բարձր մակարդակի տեսակցութիւն մը ունեցաւ, յոյն կիպրացի բանազնաց (negotiator) Պրն. Անդրէաս Մավրոեաննիսի հետ, ներկայութեամբ Կիպրոսի Հանրա-

պետութեան Կրօնական Հարցերով Յանձնակատար Տիկին Քէթի Քլիրիտուի, քննարկելու կղզիի վերամիացման նոր եղելութիւններուն լոյսի տակ՝ Կիպրահայ Համայնքին կարգավիճակը:



Երկուշաբթի, 17 Մարտ 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Վիքթորիա փողոցին վրայ գտնուող Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ համալիրին վերանորոգութեան աւարտը նշող ընդունելութեան, որ կազմակերպուած էր Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Ն.Վ. ճոն Քէօնիկի կողմէ: Հայկական համայնքէն ներկայ էին Վարուժան Արքեպիսկոպոս Հերկելեան, Թեմական եւ Վարչական ժողովներու ներկայացուցիչներ, թուրք կիպրացի եւ օտար հրաւիրեալներ, որոնք ներդրում ունեցած էին այս հսկայական աշխատանքին մէջ: Հոս տեղին է յիշենք, թէ Միացեալ Նահանգներու դեսպան Պրն. Քէօնիկ, իր արտասանած խօս-

քին մեջ, յատուկ շնորհակալութիւն յայտնեց Պրն. Վարդգէս Մահտեսեանին, այս ծրագիրի ընթացքին անոր սերտ ու արդիւնաւէտ գործակցութեան համար: Յաջորդ օրը, Պետական Ներկայացուցիչը շնորհակալագիր մը յղեց Պրն. Դեսպանին, Կիպրահայ համայնքին հանդէպ ցուցաբերած անոր յարատեւ զօրակցութեան եւ ջանքերուն համար:



**Շնորհաւորական Գիրեր**

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն.



Վարդգես Մահտեսեան, Հինգշաբթի, 13 Փետրուար 2014-ին, իր Քաղաքական Գրասենեակին մէջ, Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչյանի խընդրանքով, «Ազատ Խօսք» ելեկտրոնային պարբերականի գլխաւոր խմբագիր Տիկին Երան Գուլումճեանին յանձնեց ՀՀ Սփիւռքի Նախարարութեան յղած Շնորհակալագիրը, «Հայերն Այսօր» ելեկտրոնային բազմալեզու օրաթերթին պարբերաբար եւ անշահախնդրօրէն թղթակցելուն համար:

4 Մարտ 2014 թուակիր գիրով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Եաննօ Գուլումճեանը, Համահայկական Ձմեռնային Առաջին խաղերուն դահուկարշաւի (ski) մրցումին պրոնզ մետալին արժանանալուն համար, որ տեղի ունեցաւ Ծաղկաձորի մէջ:

21 Մարտ 2014 թուակիր նամակով մը, Պրն. Վարդգես Մահտեսեան շնորհաւորեց Պրն. Ահարոն Գարաօղլանեանը, Կիպրական Աւիաուղիներու Ընկերութեան վերահսկիչ տնօրէնի պաշտօնին նշանակուելուն ուրախ առիթով, անոր մաղթելով յաջողութիւն եւ արելշատութիւն:

**«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոն  
2014-2015 կրթական տարեշրջանի  
արձանագրութիւններ**

Սիրելի ծնողք,

Հաճոյքով կը փոխանցենք, թէ 2014-2015 կրթական տարեշրջանը պիտի սկսի 1 Սեպտեմբեր 2014-ին:

«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնը կը գործէ երկուշաբթիէն Ուրբաթ, ժամը 07.00-էն մինչեւ երեկոյեան ժամը 18.00, գոհացում տալով երկարաժամ աշխատանք ունեցող ծնողներու կարիքներուն: Կեդրոնը փակ պիտի մնայ միայն պետական տօներուն եւ Օգոստոս ամսուան ընթացքին:

Արձանագրութիւնները պիտի սկսին 1 Մայիսին եւ աւարտին մինչեւ տեղերու ամբողջացումը: Կրնան արձանագրուիլ 4 ամսականէն մինչեւ 3 տարեկան երեխաներ:

Յաւելեալ տեղեկութիւններ/յստակացումներ ստանալու համար կը խնդրուի հեռաձայնել 97-808414 թիւին ժամը 08.30 մինչեւ 14.30

**Շնորհակալութիւն  
Վարչական Խորհուրդ  
«ՆԱՆՕՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ**

## Վարդգես Եւ Մակի Մահտեսեաններ

Քրիստոսի Յարութեան

Սուրբ տօնին առիթով

կը շնորհաւորեն Կիպրահայ Զամայնքը

եւ մեր հայրենակիցները

մաղթելով՝

առողջութիւն եւ արեւշատութիւն

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

### ԿԻՊՐԱԶԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

**Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42

Ել. Յասցէ office@armenianmp.com

Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

**Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42

Ել. Յասցէ vmahdessian@parliament.cy